

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԱՌԱՔԱՆԻՆԵՐՈՎ ԱՌԱՔՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Սանկտ Պետերբուրգ, 2010 թվականի հունիսի 18)

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

հիմք ընդունելով 2007 թվականի հոկտեմբերի 6-ի «Միասնական մաքսային տարածք ստեղծելու եւ մաքսային միություն ձեւավորելու մասին» պայմանագրի եւ 2009 թվականի նոյեմբերի 27-ի «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի դրույթները,

ղեկավարվելով միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներով եւ նորմերով,

միջազգային փոստային առաքանիներով Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող, ինչպես նաեւ Կողմերի պետությունների միջեւ առաքվող ապրանքների մասով մաքսային գործառնությունները եւ մաքսային հսկողությունը պարզեցնելու նպատակներով,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրով սահմանվում են միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների մասով այն մաքսային գործառնությունների առանձնահատկությունները, որոնք իրականացվում են Մաքսային միության մաքսային տարածք ժամանելու, այդ տարածքից մեկնելու,

ինչպես նաև «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեակերպելու դեպքում:

Սույն Համաձայնագրով չեն կարգավորվում Մաքսային միության մաքսային սահմանով դիվանագիտական փոստի եւ հյուպատոսական ճամպրուկի (վալիզայի) տեղափոխման հետ կապված հարցերը:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի նպատակներից ելնելով գործածվում են հետեւյալ եզրույթները՝

ա) փոստային փաթեթ՝ պիտակ ունեցող պարկ կամ կապարակնքված կամ առանց դրա մի քանի պարկ եւ այլ տարողություններ, որոնք պարունակում են փոստային առաքանիներ եւ (կամ) տարա, որոնք փոխանակվում են Համաշխարհային փոստային միության անդամ պետությունների փոստային ծառայությունների միջազգային փոստափոխանակման վայրերի (հիմնարկությունների) կողմից.

բ) Միության ներսում փոստային առաքանիներ՝ մի Կողմի պետությունից մյուս Կողմի պետություն, այդ թվում՝ Մաքսային միության անդամ չհանդիսացող պետության տարածքով առաքվող փոստային առաքանիներ.

գ) նշանակված օպերատոր՝ փոստային ծառայությունների շահագործումն ապահովելու եւ Համաշխարհային փոստային միության ակտերից բխող իր տարածքում դրանց հետ կապված պարտավորությունները կատարելու համար Համաշխարհային փոստային միության անդամ պետության կողմից պաշտոնապես նշանակվող ցանկացած պետական կամ ոչ պետական կազմակերպություն:

Սույն Համաձայնագրում գործածված մյուս եզրույթները կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ (կամ) Համաշխարհային փոստային միության ակտերով սահմանված իմաստներով:

Հոդված 3

Միջազգային փոստային առաքանիներ պարունակող փոստային փաթեթների՝ Մաքսային միության մաքսային սահման ժամանելու վայր եւ այդ տարածքից մեկնելու վայր են հանդիսանում Կողմի պետության պետական (մաքսային) սահմանների անցակետերը, որոնք սահմանված են այդ պետության օրենսդրությամբ:

Միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքները ժամանում են Մաքսային միության մաքսային տարածք եւ մեկնում են այդ տարածքից միջազգային փոստափոխանակման վայրերում (հիմնարկություններում), որոնք սահմանված են Կողմի պետության օրենսդրությամբ:

Մաքսային միության մաքսային տարածքով միջազգային փոստային առաքանիների փոխադրումը, այդ թվում՝ ընթացողում փոխաբեռնման (վերաբեռնման) միջոցով, իրականացվում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ սույն Համաձայնագրի դրույթներով սահմանված կարգով:

Մաքսային միության մաքսային տարածք միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների բաց թողման հետ կապված մաքսային գործառնությունները, բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան իրականացվող բացթողման, իրականացվում են միջազգային փոստային առաքանիների նշանակման երկիրը հանդիսացող Կողմի պետության մաքսային մարմնի կողմից՝ Կողմերի իրավասու մարմինների կողմից սահմանվող կարգով, մասնավորապես՝ բելառուսական կողմից՝ Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի կողմից, ղազախական կողմից՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից եւ ռուսական կողմից՝ Մաքսային դաշնային ծառայության կողմից (Ռուսաստանի ՄԴԾ):

Մաքսային միության մաքսային տարածքից միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների բացթողման հետ կապված մաքսային

գործառնությունները, բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան իրականացվող բացթողման, իրականացվում են միջազգային փոստային առաքանիների ուղարկող երկիրը հանդիսացող Կողմի պետության մաքսային մարմնի կողմից՝ Կողմերի իրավասու մարմինների կողմից սահմանվող կարգով, մասնավորապես՝ բելառուսական կողմից՝ Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի կողմից, ղազախական կողմից՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից եւ ռուսական կողմից՝ Մաքսային դաշնային ծառայության կողմից (Ռուսաստանի ՄԴԾ):

Հոդված 4

Մաքսային միության մաքսային տարածք միջազգային փոստային առաքանիների ժամանման եւ (կամ) այդ տարածքից մեկնման ժամանակ, փոխադրողի կողմից ներկայացվող՝ փոխադրվող ապրանքների մասին տվյալները սահմանափակվում են Համաշխարհային փոստային միության ակտերով սահմանված եւ միջազգային փոստային առաքանիների փոխադրման ժամանակ ուղեկցող փաստաթղթերում պարունակվող տվյալներով՝

միջազգային փոստային առաքանին ուղարկողի եւ ստացողի անվանման մասին (հանձնման փոստափոխանակման հիմնարկություն, նշանակման փոստափոխանակման հիմնարկություն)։

ապրանքների համաքաշի մասին.

բեռնատեղիների քանակի մասին:

Ներմուծման եւ (կամ) արտահանման ժամանակ Մաքսային միության մաքսային տարածքով տեղափոխման համար արգելված եւ (կամ) սահմանափակված ապրանքների առկայության մասին տվյալները ներկայացվում են փոխադրողի կողմից, եթե փոխադրողը տիրապետում է նման տեղեկությունների:

Փոխադրողը ներկայացնում է Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 159-րդ հոդվածով սահմանված այլ տվյալներ՝ կախված տրանսպորտային միջոցի տեսակից:

Համաշխարհային փոստային միության անդամ պետությունների նշանակված օպերատորների կողմից արգելքները եւ սահմանափակումները պահպանելու նպատակներից ելնելով կարող են տրամադրվել առաքվող ապրանքների մասին նախնական տեղեկություններ: Մաքսային նպատակներից ելնելով նախնական տեղեկություններ ներկայացնելու եւ օգտագործելու կարգը սահմանվում է Մաքսային միության մաքսային օրենսդրության այլ ակտերով:

Միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների նկատմամբ սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթերը մաքսային մարմին են ներկայացվում շահագրգիռ անձի կամ նշանակված օպերատորի կողմից միջազգային փոստափոխանակման վայրում (հիմնարկությունում) կամ շահագրգիռ անձի կողմից՝ մաքսային մարմնի կողմից սահմանված այլ վայրերում՝ մաքսային հայտարարագրման եւ ապրանքի բացթողման ժամանակ:

Հոդված 5

Մաքսային միության մաքսային տարածքից միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպվում է մաքսային մարմնի կողմից միջազգային փոստափոխանակման վայրում (հիմնարկությունում):

Մաքսային միության մաքսային տարածքից միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպվում է մաքսային մարմնի կողմից՝ Կողմերի պետությունների պետական (մաքսային) սահմաններով անցման կետում միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների մեկնման թույլտվության հիման վրա:

Հոդված 6

Միջազգային փոստային առաքանին եւ (կամ) միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային

ընթացակարգով ձեւակերպելիս ուղարկող մաքսային մարմինը որպես տարանցիկ փոխադրման մաքսային հայտարարագիր կարող է ընդունել հետեւյալ փաստաթղթերից մեկը՝

ա) տարանցիկ փոխադրման հայտարարագիր՝ գրավոր կամ էլեկտրոնային ձեւով, որը պարունակում է սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով սահմանված տվյալները.

բ) Համաշխարհային փոստային միության ակտերով սահմանված ձեւով CN 37, CN 38, CN 41, CN 46, CN 47 հանձնման բեռնագրեր, որոնք ուղեկցում են միջազգային փոստային առաքանիները դրանց փոխադրման ժամանակ եւ պարունակում են սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով սահմանված տվյալները, եթե.

միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքները տեղ հասցնելու վայր է հանդիսանում՝

մաքսային հսկողության գոտին մեկնման վայրում,

մաքսային հսկողության գոտին միջազգային փոստափոխանակման վայրում (հիմնարկությունում),

մաքսային հսկողության գոտին միջազգային փոստային առաքանու փոխաբեռնման (վերաբեռնման) եւ մաքսային մարմնի գտնվելու վայրում (միջազգային փոստափոխանակման վայր (հիմնարկություն) կամ մեկնման վայր փոխադրելու ժամանակ),

մաքսային հսկողության գոտին ժամանման վայրում (Մաքսային միության անդամ չհանդիսացող պետության տարածքով Մաքսային միության ապրանքները փոխադրելու ժամանակ).

գ) այլ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր, որոնք ներառում են սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով սահմանված տվյալները:

Միջազգային փոստային առաքանիները եւ (կամ) միջազգային փոստային առաքանիներով առաքվող այն ապրանքները, որոնց փոխադրումն իրականացվում

է նշանակված օպերատորների կողմից կամ նրանց հասցեով, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս այդ ապրանքների համար մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում չի պահանջվում:

Միջազգային փոստային առաքանիները եւ (կամ) միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքները միջազգային փոստափոխանակման վայր (հիմնարկություն) չհասցնելու դեպքում Մաքսային միության՝ միջազգային փոստային առաքանիների նշանակման երկիր հանդիսացող անդամ պետության նշանակված օպերատորը մաքսատուրքերի, հարկերի վճարման մասով համապարտ պարտավորություն է կրում այն մաքսային մարմնի առջեւ, որից առաջ է սահմանվել «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը:

Ընդ որում, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ նշանակման մաքսային մարմին չհասցված միջազգային փոստային առաքանիները եւ (կամ) միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքները, մաքսատուրքի, հարկերի վճարման եւ գանձման նպատակներով, համարվում են Մաքսային միության այն անդամ պետության տարածքում գտնվող առաքանիներ եւ ապրանքներ, որի մաքսային մարմնից առաջ է սահմանվել «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը:

Միջազգային փոստային առաքանիները եւ (կամ) միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքները միջազգային փոստափոխանակման վայր (հիմնարկություն) չհասցվելու դեպքում ներմուծման ենթակա մաքսատուրքերի, հարկերի վճարման գումարը հաշվարկվում է միասնական դրույքաչափով՝ 4 եվրո միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների համաքաշի 1 կիլոգրամի դիմաց: Ընդ որում, ապրանքների համաքաշում չի ներառվում հետեւյալ տեսակի միջազգային փոստային առաքանիների քաշը՝

աերոգրամներ.

փոստային բացիկներ եւ նամակներ.

սեկրոգրամներ:

Հոդված 7

Տարանցիկ փոխադրման հայտարարագիրը, ինչպես նաև ուղարկող մաքսային մարմնի կողմից որպես տարանցիկ փոխադրման հայտարարագիր ընդունվող տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը պետք է ներառեն տեղեկություններ՝

միջազգային փոստային առաքանիներ ուղարկողի (հանձնման երկրի նշանակված օպերատորի), ստացողի (նշանակման փոստափոխանակման հիմնարկության) մասին,

միջազգային փոստային առաքանիների առաքման երկրի, նշանակման երկրի (հանձնման փոստափոխանակման հիմնարկության երկիր, նշանակման փոստափոխանակման հիմնարկության երկիր) մասին,

փոխադրողի մասին,

միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցի մասին,

փոստային փաթեթների համարների մասին,

համաքաշի մասին,

բեռնատեղիների քանակի մասին,

ճանապարհին ապրանքների պլանավորվող վերաբեռնման կամ այլ բեռնային այլ գործողությունների մասին,

միջազգային փոստային առաքանիների նշանակման կետի (նշանակման փոստափոխանակման հիմնարկության) մասին:

Հոդված 8

Միության ներսում փոստային առաքանիները ենթակա չեն մաքսային հսկողության, չեն ձեռակերպվում մաքսային ընթացակարգերով, դրանց մասով չեն իրականացվում մաքսային գործառնություններ:

Կողմերի պետությունների նշանակված օպերատորներն ապահովում են՝

Կողմերի պետությունների մաքսային մարմիններին նշանակված օպերատորների եւ նշանակված օպերատորների կողմից օգտագործվող տրանսպորտային միջոցների մասին տեղեկատվությունը.

միջազգային փոստային առաքանիների եւ Միության ներսում փոստային առաքանիների առաքումը տարբեր փոստային փաթեթներով՝ առանձին ուղեկցող փաստաթղթերով.

Միության ներսում փոստային առաքանիների նույնականացումը:

Նշանակված օպերատորները Կողմերի պետությունների մաքսային մարմիններին տեղեկացնում են Միության ներսում փոստային առաքանիների նույնականացման եղանակի մասին:

Եթե միջազգային փոստային առաքանիներն առաքվում են Միության ներսում առաքվող փոստային առաքանիների հետ մեկ փոստային փաթեթով, ապա այդ փոստային փաթեթները տեղափոխվում են Մաքսային միության մաքսային տարածքով մաքսային հսկողությամբ՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան:

Հոդված 9

Մաքսային նպատակներից ելնելով միջազգային փոստային առաքանիներ չեն հանդիսանում Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված փաստաթղթերով ուղեկցվող այն առաքանիները, որոնց տեղ հասցնելու վայրը Մաքսային միության մաքսային տարածք ժամանելիս, տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերին համապատասխան, միջազգային փոստափոխանակման վայրից (հիմնարկությունից) բացի այլ վայր է:

Հոդված 10

Կողմերի միջեւ ծագող՝ սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, բանակցություններ ու խորհրդակցություններ անցկացնելու միջոցով:

Եթե վեճի կողմերը խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը դրանց անցկացման վերաբերյալ՝ վեճի մի կողմից վեճի մյուս կողմին հասցեագրված պաշտոնական գրավոր դիմումը ներկայացնելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, ապա վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը, եթե վեճի կարգավորման եղանակների վերաբերյալ վեճի կողմերի միջեւ այլ պայմանավորվածություն ձեռք չի բերվել:

Մաքսային միության հանձնաժողովը կողմերին աջակցություն է ցուցաբերում վեճի կարգավորման հարցում՝ նախքան այդ վեճը Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը հանձնելը:

Հոդված 11

Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրություններով:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման եւ ժամանակավորապես կիրառվում է «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի

պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն
ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի հունիսի 18-ին,
մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Մաքսային միության
հանձնաժողովում, որը յուրաքանչյուր Կողմին կտրամադրի դրա հաստատված
պատճենը:

(Ստորագրություններ)